01-738
26.06.2026

«ԱՄՈՒՐԱ» ՍՊ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՏՆՕՐԵՆ
Լ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆԻՆ
(ՀՎՀՀ՝ 01091505, էլ. հասցե՝ amura.tender@mail.ru)

Ծ Ա Ն Ո Ւ Ց Ո Ւ Մ

Պայմանագիրը միակողմանի լուծելու մասին

Հարգելի՛ տիկին Լենա Հարությունյան,

ԲԿ ՄԿԿ Ռուս-Հայկական համալսարանի (այսուհետ՝ Գնորդ) և «ԱՄՈՒՐԱ» ՍՊ ընկերության (այսուհետ՝ Վաճառող) միջև 2026 թվականի մայիսի 14-ին կնքվել է թիվ «ՌՀ-ՍՀ-ԳՀԱՊՁԲ-26/24-1» ծածկագրով պայմանագիրը (այսուհետ՝ Պայմանագիր), համաձայն որի Վաճառողը պարտավորվել է մատակարարել 1200 տուփ «Թուղթ, A4 ֆորմատի» ապրանքատեսակ (այսուհետ՝ Ապրանք)՝ համաձայն Պայմանագրի անբաժանելի մասը կազմող N1 հավելվածով սահմանված տեխնիկական բնութագրի և մատակարարման ժամանակացույցի պահանջների: Պայմանագրի գինը կազմում է 2 200 000 (երկու միլիոն երկու հարյուր հազար) ՀՀ դրամ, ներառյալ ԱԱՀ-ն:

Ըստ Պայմանագրի N1 հավելվածի՝ Ապրանքի մատակարարումը Վաճառողի կողմից իրականացվում է մինչև 2026 թվականի դեկտեմբերի 25-ը ընկած ժամանակա-հատվածում՝ յուրաքանչյուր անգամ Ապրանքի մատակարարման պատվերը ստանալու պահից հաշված 3 աշխատանքային օրվա ընթացքում: Ապրանքի պատվերը կատարվում է բանավոր, կամ գրավոր՝ Վաճառողի էլեկտրոնային փոստի հասցեին պատվերը ուղարկելու միջոցով:

2026թ. հունիսի 8-ին էլեկտրոնային փոստով Վաճառողին ներկայացվել է առաջին պահանջարկը: Սակայն 2026թ. հունիսի 15-ին Գնորդի նախաձեռնությամբ տեղի ունեցած հեռախոսազրույցի ընթացքում Վաճառողի ներկայացուցիչը

բանավոր հայտնել է, որ Պայմանագրով նախատեսված Ապրանքը չի մատակարարվելու: Նշված հայտարարությունը գնահատվում է որպես Վաճառողի կողմից Պայմանագրով ստանձնած պարտավորությունների կատարումից հրաժարվելու և Ապրանքի մատակարարումը չիրականացնելու հստակ դիրքորոշում:

2026 թվականի հունիսի 16-ին էլեկտրոնային փոստով Վաճառողը տեղեկացվել է, որ Գնորդը նախաձեռնում է պայմանագրի ամբողջությամբ միակողմանի լուծարման գործընթաց: Չնայած պատշաճ կերպով ուղարկված նամակին՝ Ընկերության կողմից որևէ պատասխան կամ առարկություն սահմանված ժամկետում չի ներկայացվել, և նամակը մնացել է անպատասխան:

Պայմանագրի 1.1 կետի համաձայն՝ Վաճառողը պարտավորվում է Պայմանագրով սահմանված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով Գնորդին մատակարարել Պայմանագրի N1 հավելվածով՝ Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացուցով նախատեսված ապրանքը, իսկ Գնորդը պարտավորվում է ընդունել ապրանքը և վճարել դրա համար:

Պայմանագրի 2.4.1 կետի համաձայն՝ Վաճառողը պարտավոր է Գնորդին հանձնել ապրանքը՝ պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով՝ ղեկավարվելով գործող օրենսդրությամբ:

Պայմանագրի 2.1.1 կետի համաձայն՝ Ապրանքը պայմանագրով սահմանված ժամկետում Վաճառողի կողմից չմատակարարելու դեպքում Գնորդն իրավունք ունի հրաժարվել ապրանքից, եթե մատակարարման ժամկետները խախտվել են 5 օրից ավելի:

Պայմանագրի 2.1.7 կետի համաձայն Գնորդն իրավունք ունի միակողմանի լուծել պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Վաճառողն էականորեն խախտել է պայմանագիրը: Կատարողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատակարարվել է անպատշաճ որակի ապրանք որը չի կարող փոխարինվել Գնորդի համար ընդունելի ժամկետում,

բ) ապրանքի մատակարարման ժամկետները խախտվել են 5 օրից ավելի:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի (այսուհետ՝ Օրենսգիրք) 345-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ «Պարտավորության ուժով մի անձը (պարտապանը) պարտավոր է մեկ այլ անձի (պարտատիրոջ) օգտին կատարել որոշակի գործողություն. այն է՝ վճարել դրամ, հանձնել գույք, կատարել աշխատանք, մատուցել ծառայություն և այլն, կամ ձեռնպահ մնալ որոշակի գործողություն կատարելուց, իսկ պարտատերն իրավունք ունի պարտապանից պահանջել կատարելու իր պարտականությունը:»:

Օրենսգրքի 347-րդ հոդվածի համաձայն՝ պարտավորությունները պետք է կատարվեն պատշաճ՝ պարտավորության պայմաններին, օրենքին և այլ իրավական ակտերի պահանջներին համապատասխան:

Օրենսգրքի 408-րդ հոդվածի համաձայն՝ Պարտավորության խախտում է համարվում այն չկատարելը կամ անպատշաճ (կետանցով, Ծառայությունների, աշխատանքների և ծառայությունների թերություններով կամ պարտավորության բովանդակությամբ որոշվող այլ պայմանների խախտմամբ) կատարելը:

Օրենսգրքի 466-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ «Պայմանագիրը լրիվ կամ մասնակի կատարելուց միակողմանի հրաժարվելու դեպքում, երբ պայմանագրից հրաժարվելը թույլատրվում է օրենքով կամ կողմերի համաձայնությամբ, պայմանագիրը համապատասխանաբար համարվում է լուծված կամ փոփոխված:

Հիմք ընդունելով վերոգրյալը՝ Գնորդն միակողմանի լուծում է Պայմանագիրը:

«Գնումների մասին» օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի համաձայն՝ մասնակիցն ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, եթե խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը և մասնակիցը հրավերով և (կամ) պայմանագրով սահմանված ժամկետում չի վճարել հայտի, պայմանագրի և (կամ) որակավորման ապահովման գումարը:

«Գնումների մասին» օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով նախատեսված հիմքերն ի հայտ գալու դեպքում պատվիրատուի ղեկավարի պատճառաբանված որոշման հիման վրա լիազորած մարմինը մասնակցին ներառում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում:

Եթե լիազորված մարմնին որոշումը ներկայացվելու վերջնաժամկետը լրանալու օրվա դրությամբ մասնակիցը կամ պայմանագիրը կնքած անձը վճարում է պայմանագրի և (կամ) որակավորման ապահովման գումարը, ապա պատվիրատուն տվյալ մասնակցին ցուցակում ներառելու պատճառաբանված որոշումը չի ներկայացնում լիազորված մարմին:

Վաճառողի կողմից տուժանքի ձևով ներկայացված պայմանագրի և որակավորման ապահովումները սահմանված կարգով կներկայացվեն Վաճառողին սպասարկող բանկ՝ պայմանագրի և որակավորման ապահովումները Գնորդի անվամբ «Արդշինբանկ» ՓԲ ընկերությունում բացված թիվ 2480100103250010 հաշվեհամարին փոխանցելու համար:

Հաշվի առնելով վերոգրյալն՝ առաջարկում ենք Գնորդի անվամբ «Արդշինբանկ» ՓԲ ընկերությունում բացված թիվ 2480100103250010 հաշվեհամարին փոխանցել՝

1. Պայմանագրի ապահովման գումարը՝ 240 000 (երկու հարյուր քառասուն հազար) ՀՀ դրամ,
2. Պայմանագրի որակավորման ապահովման գումարը՝ 360000 (երեք հարյուր վաթսուն հազար) ՀՀ դրամ:

Եթե սույն ծանուցումը ստանալու պահից 10 (տասը) օրվա ընթացքում փոխանցվեն վճարման ենթակա գումարները, ապա Գնորդը չի ներկայացնի Վաճառողին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու վերաբերյալ պատճառաբանված որոշում:

Հարգանքով,

Ռեկտոր **Է. ՍԱՆԴՈՅԱՆ**